

ԱՆԱԳԻՏ ՄԱԿԱՐՅԱՆ
ANAHIT MAKARYAN

<<ԱԶԱՏՈՒԹՅՈՒՆ>> ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԳԼԵՐԵՆ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ
ԴԱՐՉՎԱԾԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ

Ժամանակակից լեզվաբանության մեջ լեզուն ընկալվում է որպես ոչ միայն հաղորդակցման կարևորագույն միջոց, այլև շրջապատող իրականության ճանաչման, տեղեկատվության կուտակման և փոխանցման միջոց: Սրա հետ կապված մարդը, որպես լեզվական ունակությամբ և հիշողությամբ օժտված էակ, անխուսափելիորեն դառնում է տարբեր հարակից և նույնիսկ ոչ հարակից գիտությունների ուսումնասիրության կենտրոնական օբյեկտը: Այսպիսով, 20-րդ դարի երկրորդ կեսին գիտական մտածողության զարգացման մեջ մարդաբանական հարացույցի անցումը խթանող կարևորագույն գործոններից մեկը մարդակենտրոն միտումն է (Степанов, 1985; Телия, 1996): Այսպիսի մոտեցման արդյունքում գիտության մեջ ստեղծվեց և զարգացավ մի նոր ուղղություն, որը ստացավ ճանաչողականություն (cognitivism) անվանումը:

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ մարդու մտածողությունը ճանաչողական գործընթացների ամբողջություն է, որը միացնում է ճանաչողականությունը և լեզուն, որից հետևում է, որ լեզուն յուրահատուկ ճանաչողական գործընթաց է, իսկ լեզվի ճանաչողական գործառույթը կարևորագույններից մեկն է հաղորդակցման հետ մեկտեղ: (Кубрякова, 1997): Բողուն դը Կուրտենեն նշում է. «լեզուն գտնվում է միայն անհատների ուղեղում, հոգում, հոգեկան աշխարհում, որը և կազմում է տվյալ լեզվական հասարակությունը»: Ըստ Մասլովայի՝ լեզուն սերտորեն կապված է մշակույթի հետ. այն ձևավորվում և զարգանում է մշակույթի մեջ, ինչպես նաև արտահայտվում է մշակույթի միջոցով (Маслова 2010): Այս գաղափարի հիման վրա 20-րդ դարի վերջին ձևավորվեց մի նոր գիտություն՝ լեզվամշակութաբանությունը, որը համարվում է լեզվաբանության ինքնուրույն ճյուղ: Այն ուսումնասիրում է լեզուն և մշակույթը, դրանց փոխհարաբերությունները, ինչպես նաև ազգային մշակույթը, որը յուրովի արտացոլվում է լեզվի միջոցով: Ազգային մշակույթի յուրահատկությունները լեզվում արտահայտվում է հասկացույթների (concept) միջոցով: Այսպիսով, հասկացույթը իր մեջ ներառում է այն ամենը, ինչը կապված է

հասկացության և նշանակության ոլորտների հետ, սակայն հասկացությո՞ր նաև մշակութային փաստ է, որը ներառում է հասկացությի ելակետային ձևը՝ ստուգաբանությունը, գուգոդումները, վերացարկումները և այլն:

«Ազատություն» հասկացությի վերլուծությունը առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում գուգոդովող լեզուներում, քանի որ կախված մշակութային առանձնահատկություններից այն ձեռք է բերում գաճանակաճ նշանակություններ, լեզվում արտացոլվում է տարբեր միջոցներով, ինչպես նաև ընկալվում է տարբեր կերպ անգլիական և հայ լեզվամշակոյթներում: Հոգվածում ուսումնասիրվում են «ազատություն» հասկացությի լեզվական դրսևորումները անգլերենում և հայերենում, ինչպես նաև փորձ է արվում բացահայտել այդ հասկացությի լեզվամշակութային առանձնահատկությունները երկու լեզուներում:

<<Ազատություն>> հասկացութի վերաբերող դարձվածային միավորների (այսուհետ՝ ԴՄ) ուսումնասիրությունը անգլերենում և հայերենում ցույց է տալիս, որ այդ ժողովուրդների լեզվամտածողության մեջ կան և նմանություններ, և տարբերություններ: ԴՄ-ները արտացոլում են տվյալ լեզվով խոսող ժողովրդի մտածելակերպը և հնարավորություն են տալիս բացահայտել, թե ինչ գուգոդություններ են կապված <<ազատություն>> հասկացութի հետ: Ինչպես վկայում են դարձվածաբանական բառարանները <<ազատություն>> հասկացութն առկա է թե անգլիական և թե հայկական լեզվամտածողության մեջ: Անգլերենում այն արտահայտվում է տարբերակված ձևով, այն է՝ <<freedom>> և <<liberty>> բառերի միջոցով, մինչդեռ հայերենում միայն մեկ՝ <<ազատություն>> բառի միջոցով: Հարկ է նշել, որ երկու ժողովուրդների լեզվամտածողության մեջ էլ <<ազատությունը>> ընկալվում է որպես ուրիշի իշխանությունից գերծ, արգելքներից ազատ լինելը: Այսպիսով, համամարդկային մտածելակերպը հանգեցնում է նմանությունների, որոնք արտահայտվում են գուգոդովող լեզուներում առկա ԴՄ-ների միջոցով: Այսպես օրինակ՝ մի շարք ԴՄ-ների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ ինչպես անգլերենում, այնպես էլ հայերենում <<hand, ձեռք>> գոյականով կազմված ԴՄ-ը ունեն միննոյն իմաստը, այն է՝

free hand (freedom to exercise complete control over something)

ազատ ձեռքեր, ձեռքերի ազատություն, ձեռքերն ազատ լինել - ազատ, անկաշկանդ գործելու լայն հնարավորություն

Get/give a free hand (to allow someone to do whatever they think is necessary in a particular situation) ձեռքերը արձակել կամ ազատ արձակել - գործողություններին ազատություն տալ

Free with one's hands (prone to fight or strike, others with whom one is in disagreement or whom one wishes to control or subdue) *ձեռքին ազատություն տալ* - հարձակվել, լիովին ազատ զգալ անելու, ինչ ուզում է:

Հետաքրքրական է, որ թե անզլերենում և թե հայերենում <<թոշուն>> ընկալվում է որպես ազատության խորհրդանիշ, որն իր արտացոլումն է գտնում հետևյալ ԴՄ-ներում:

free as a bird (carefree; completely free and unhindered) - ազատ, անարգել

ազատ թռչուն - անկաշկանդ գործող, ոչնչով չկաշկանդված մարդ

անհոգ թռչուն - հոգսերից պարտավորություններից ազատ մարդ

թոշունի պես - ազատ, ինքնիշխան

երկնքի թռչուն - ազատ, ինքնիշխան մարդ

Հատկանշական է, որ ինչպես անզլերենում, այնպես էլ հայերենում կարելի է առանձնացնել ԴՄ-ներ, որոնցում <<ազատություն>> հասկացույթը զուգորդվում է <<պայմանականություններից և սահմանափակումներից զերծ լինելու հետ>>, օրինակ՝

a free agent - someone whose actions are not limited or controlled by anyone else (Ինչ-որ մեկը ում գործողությունները սահմանափակված չեն կամ չեն վերահսկվում) կառավարվում ինչ-որ մեկի կողմից

a free-for-all - a situation that is not controlled, and where everyone does what they want or fights for what they want to get (Բրավիճակ, որը վերահսակված չէ, և յուրաքանչյուրը կարող է անել ինչ ցանկանում է կամ պայքարել նրա համար ինչ ցանկանում է ձեռք բերել)

allow/give something (a) free rein- if you give ideas or emotions free rein, you allow them to develop and do not try to control them (Մտքերին կամ զգացմունքներին ազատություն տալ և չվերահսկել)

no strings attached - No stipulations or restrictions (Առանց պայմանականությունների կամ սահմանափակումների)

ինչպես ձուկը ջրում - իրեն ազատ, անկաշկանդ, լավ զգալ որևէ տեղ լեզվի կապերը արձակել - ազատ, անկաշկանդ, համարձակ խոսել կամ սանձարձակ կերպով արտահայտվել, շատախոսել

բաց դուռ - ազատ, լայն հնարավորություն

թևերը պարզել - լայն, ազատ զգալ "ու գործել"

ազատ ձեռքեր - գործելու լայն հնարավորություն

ձեռքերի ազատություն - ազատ, անկաշկանդ գործելու հնարավորություն
լիաթոք շնչել - իրեն ազատ, անկաշկանդ զգալ

Այդուհանդերձ, նշենք, որ անզլերենում առանձնացրել ենք ԴՄ, ըստ որի <<ազատությունը>> զուգորդվում է << *հասարակական* պայմանականություններից և սահմանափակումներից զերծ լինելու հետ>>, օրինակ՝

a free spirit - someone who does what they want and *does not feel limited* by the usual rules of social behaviour (Նա ում գործողությունները սահմանափակված չեն պայմանականություններով և նախապաշարմունքներով):

Բազմաթիվ ԴՄ-ների հետազոտությունը (70 անգլերենում և 100 հայերենում) փաստում է, որ այդ երկու լեզվով խոսող ժողովուրդների լեզվամտածողության մեջ կան նաև մի շարք տարբերություններ, ինչն էլ բնորոշում է ազգային մտածելակերպի յուրահատկությունը: Անգլերենի յուրահատկությունն այն է, որ <<ազատություն>> հասկացության արտահայտող ԴՄ-ների սահմանման մեջ հաճախ առկա են *to allow, to permit* (թույլ տալ, թույլատվություն) իմակները, որից կարելի է եզրակացնել, որ անգլիական լեզվամտածողության մեջ <<ազատություն>> հասկացությամբ զուգորդվում է <<թույլատվություն ստանալու հետ>>, *ինչպես օրինակ՝*

allow/give somebody (a) free rein- *to allow* someone to do what they want or go where they want to (often + to do sth) (Թույլ տալ ինչ-որ մեկին անել ինչ ցանկանում է կամ գնալ այնտեղ, որտեղ ցանկանում է),

feel free (to do something) - *to feel like one is permitted* to do something or take something (Թույլատրություն, ազատություն, անել ինչ ցանկանում ես),

give somebody a free hand - *to allow* someone to do whatever they think is necessary in a particular situation (often + to do sth) (Թույլ տալ ինչ-որ մեկին անել այն ինչ համարում է անհրաժեշտ տվյալ իրավիճակում),

Get etc a free hand - *get etc permissions* and opportunity to make one's own decisions and arrangements in respect of one's work, an undertaking, etc. (Թույլատրություն, հնարավորություն ստանալ որոշումներ կայացնելու)

Give sb etc a blank cheque - *give sb etc complete freedom, or permission* to do sth (esp to spend money) without reference to anybody else (Տալ բացարձակ ազատություն կամ թույլատրություն),

Give sb carte blanche - *allow, or authorize* sb to do or say as he likes, make his own arrangements, use his own initiative (Թույլատրություն, իշխանություն տալ),

Give free play to sth - *allow* freedom of movement or expressions to sth (Ազատություն տալ շարժվելու, արտահայտվելու),

give the run of the house - *give sb freedom, permission* to use one's house as if it were his own (Ազատություն, թույլատրություն տալ օգտագործել ինչ-որ մեկի տունը ինչպես սեփականը),

give a wide berth to - *To allow* latitude, leeway, or freedom (Ազատություն տալ):

Նշենք նաև, որ անգլերենում առկա են ԴՄ-ներ, որոնք կազմված են *peace* (խաղաղություն) իմակով և արտահայտում են ազատության իմաստ՝ *ազատություն պատերազմից, վախից, մեղքի զգացումից, ֆիզիկական կամ մտավոր լարվածությունից, անհանգստությունից:*

peace in our time – freedom or deliverance, from war during our lifetime; peace as a fact, not sth to be hoped and worked for in the future, peace for us now, whatever may happen to others in the future (Ազատություն պատերազմից)

one's (own) peace of mind – freedom from anxiety, guilt, fear (Ազատություն անհանգստությունից, մեղքից, վախից)

peace and quiet – freedom from physical or mental disturbance caused by others or by one (Ազատություն ֆիզիկական կամ մտավոր լարվածությունից)

peace and plenty – freedom from foreign wars or internal disturbance, lawlessness etc together with prosperous or comfortable, conditions of life (Ազատություն պատերազմից կամ ներքին լարվածությունից, անօրինությունից):

Այսպիսով, կարելի է եզրակացնել, որ անգլիական լեզվամտածողության մեջ ազատությունը զուգադրվում է խաղաղության հետ, որը բնորոշ չէ հայերենին: Հետաքրքրություն են ներկայացնում նաև *and* շաղկապով կազմված բառակապակցությունները, որոնց երկրորդ բաղադրիչները ներառում են մի քանի իմաստային դրսևորումներ, ինչպես՝

peace and quiet – freedom from physical or mental disturbance caused by others or by one (Ազատություն ֆիզիկական կամ մտավոր լարվածությունից)

peace and plenty – freedom from foreign wars or internal disturbance, lawlessness etc together with prosperous or comfortable, conditions of life (Ազատություն պատերազմից կամ ներքին լարվածությունից, անօրինությունից),

free and easy – casual, relaxed (Ազատ, չկաշկանդված):

Հետքերակա է, որ <<ազատություն>> հասկացության անգլերենում արտահայտվում է <<home, house, room>> գոյականները, մինչդեռ հայերենում՝ միայն <<դուռ>> գոյականով:

to feel at home – զգալ ինչպես ձուկը ջրում,

give the run of the house – give sb freedom, permission to use one's house as if it were his own (Ազատություն, թույլատրություն տալ օգտագործել ինչ-որ մեկի տունը ինչպես սեփականը),

have etc elbow room – have freedom within certain limits, to experiment, negotiate, manoeuvre (Ազատություն ունենալ որոշ սահմանափակումներով):

Ինչպես վկայում են դարձվածաբանական բառարանները, հայերենում <<դուռ>> գոյականով կազմված ԴՄ-ներում <<ազատությունը>> զուգորդվում է <<լայն հնարավորությունների հետ>>: Ինչպես օրինակ՝

բաց դուռ – ազատ, լայն հնարավորություն

մեկի առաջ դուռը բաց անել – ազատ մուտք տալ, սիրով ընդունել

իդ դռները բաց անել – ազատ ելումուտ սահմանել

մեկի առաջ դուռը բացվել – ազատ մտնելու, այցելելու հնարավորություն

Միևնույն ժամանակ հետաքրքրություն է ներկայացնում հետևյալ ամերիկյան դարձվածքը, որն արտահայտում է այն գաղափարը, որ <<ազա-

տությունը (դժվարություններից զուրկ լինելը) հաջողության գրավականն է», այսինքն «ազատությունը» զուգորդվում է «հաջողության հետ»:

be home free (American & Australian) - to be certain to succeed at something because you have finished the most difficult part of it (Դժվարություններից զուրկ, ազատ լինելը հաջողության գրավականն է)

Բազմաթիվ ԴՄ-ների վերլուծությունը հայերենում թույլ է տալիս եզրակացնել, որ հայկական լեզվամտածողության մեջ «ազատություն» հասկացույթը ընկալվում է որպես՝

- <<Ֆիզիկական ազատություն>>

ձեռքից պրծնել – ազատվել, օձիքը մեկի ձեռքից ազատել, օձիքը ազատել – պոկ գալ մեկի ձեռքից, հագիվ-հագ պրծնել, շղթայից արձակել – շղթայազերծել, շղթայից հասնել – կապանքներից ազատել, շղթաները փշրել – նույնը, մեկի օձիքը բաց թողնել – ազատ թողնել

- <<Ներքին, հոգեկան ազատություն>>

խղճի հետ հաշտվել – խղճի խայթից ազատվել՝ ուղղելով կատարվածը հոգին թեթևացնել – ներքին տանջալի ապրումներից ազատվել թեթև հոգով – ոգեկան բեռից ձերբազատված, հոգեպես թեթևացած իր խղճի հետ հաշիվ մաքրել – մեղքերից ազատվել, մեղքերը քավել ազատ շունչ առնել – փխբ. Մի բեռից ձերբազատվել, հոգեպես թեթևանալ ազատ շունչ քաշել – իրեն ազատ զգալ քավարանով, քավարանի միջով անցնել – մաքրվել մեղքերից

- <<դժվար վիճակից, դրությունից, վտանգից, հոգսերից ազատություն>>

Ազատ շունչ քաշել – հոգսերից, կաշկանդված վիճակից ազատվել Ականջներից քաշել – հանել – նեղ դրությունից մեկին ազատել Ականջները հանգստանալ – չանհանգստանալ, հետապնդումներից ազատվել

Աչք բացել – զբաղմունքներից, փորձանքներից, հոգսերից և այլն ազատվել, դուրս գալ յոթ քարի արանքից – դժվար կացությունից որևէ հնարքով, մեծ դժվարությամբ ազատվել, փրկվել

իր կաշին ազատել կամ փրկել – վտանգավոր, անախորժ վիճակից, իրադրությունից խույս տալ, անվնաս դուրս պլոծնել

կաշին փրկել/ ազատել – վտանգավոր կամ ոչ հաճելի դրությունից իր զլուխն ազատել՝ խույս տալ

սրտից քար ընկնել – հոգսերից, մտատանջությունից ազատվել

վերջին հասնել – ազատվել «ծանր վիճակից»

իր ուսերից թոթափել – իրեն ծանրությունից ազատել

ուսերից նետել – մի ծանրությունից ազատվել

օձիքն ազատվել – վտանգից, վնասակար, տհաճ մեկից պրծնել

Հայերենի յուրահատկությունը այն է, որ հայերենում ԴՄ-ները մեծամասամբ կազմված են <<մարմնի մաս>>, ինչպես նաև <<հագուստ>> ցույց տվող գոյականներով: Մենք առանձնացրել ենք 38 դմ, որոնք կազմված են <<մարմնի մաս>> ցույց տվող գոյականներով:

Գլուխ - գլուխն ազատել, գլխից հիմարությունները դուրս վանել կամ դուրս քաշել, գլուխ ազատել, գլուխը փախցնել, գլուխ հանել, ինքն իր գլխին, գլխից անցնել, գլխից էլ ազատվել, գլխացավից էլ, իր գլխից հանել

Ձեռք - ձեռքից պրծնել, ձեռքերը արձակել կամ ազատ արձակել, ձեռքին ազատություն տալ, ձեռքն ու ոտքը արձակել, ձեռքերն ազատ լինել

Ականջ - ականջները հանգստանալ, ականջներից քաշել - հանել

Աչք - աչք բացել, աչքերին ազատություն տալ

Բերան - բերանին կապ կամ փակ չունենալ, ազատ բերան, մեկի բերանը բաց անել, բերանի կապերը քանդել

Լեզու - լեզվի կապերը արձակել, լեզվի կապերը արձակվել կամ բացվել, լեզվի կապերը քանդել, լեզվին ազատություն տալ

Ճակատ - ճակատը բաց լինել, ճակատը բաց/բաց ճակատով

Կաշի - իր կաշին ազատել կամ փրկել, կաշին փրկել, կաշին ազատել

Թև - թևերը պարզել, թևերն արձակել

Ուս - իր ուսերից թոթափել, ուսերից նետել

Բազուկ - մեկի բազուկներն ազատել

Միտք - սրտից քար ընկնել

Պոչ - պոչը պրծացնել

ԴՄ-ների վերլուծությունը փաստում է, որ անգլերենում մարմնի մաս ցույց տվող գոյականները սակավաթիվ են և կազմված են միայն <<ձեռք>> մարմնի մաս ցույց տվող գոյականով՝ *free hand, get/give a free hand, free with one's hands*: <<Հագուստ>> գոյականով կազմված ԴՄ-ները կարելի է ներկայացնել հետևյալ 6 դարձվածքներում՝ *մեկի օձիքը բաց թողնել, օձիքը թափ տալ, օձիքն ազատվել, իր օձիքն ազատել, գդակը ջուրեն չոր հանել, իր շապիկը ձեղքել*:

Հետքերություն են ներկայացնում հայերենում այն ԴՄ-ները, որոնցում <<ազատության>> գաղափարը կապվում է Աստծո օրհնանքի հետ, որն էլ արտացոլում է ազգային մտածելակերպի յուրահատկությունը: Աստված պահեց - փորձանքից ազատվեց

Աստծո լույսը վայելել - կյանքն ազատ ապրել

Նշենք նաև, որ հայերենի որոշ ԴՄ-ներում <<ազատության>> գաղափարը ներկայացված է հակադիր գաղափարներով՝ *նոր կյանք և մահ*: նոր առավոտ կամ արշալույս բանալ - փրկություն, նոր կյանք տալ մորից նոր ծնվել - կյանքը մեծ վտանգից ազատել

կրկին ծնվել – մահացու վտանգից ազատվել
յույս ծագել – բախտավորության, ազատության հույս, ակնկալիք լինել
աշխարհից ազատվել – մեռնել

Կարելի է եզրակացնել, որ <<ազատությունը>> գուգորդվում է հայ լեզվամտածողության մեջ նոր կյանքի, ինչպես նաև մահվան հետ:

Անիտիվելով, հարկ է նշել, որ ՊՄ-ները արտացոլում են ժողովրդի լեզվամտածողությունը, և դրանց ուսումնասիրությունը թույլ է տալիս վեր հանել այն նմանությունները և տարբերությունները, որոնք սովա են անգլիացի և հայ ժողովուրդների լեզվամտածողության մեջ: Անգլերենի յուրահատկությունն այն է, որ անգլերենում <<ազատությունը>> գուգորդվում է հիմնականում <<հասարակական պայմանականություններից և սահմանափակումներից զերծ լինելու>>, <<թույլատվություն ստանալու>>, ինչպես նաև <<խաղաղության հետ>>, մինչդեռ հայերենում այն մեծամասամբ գուգորդվում է <<հեքին, հոգեկան ազատության>>, <<դժվար վիճակից, դրությունից, վտանգից, հոգսերից ազատության հետ>>:

Գրականության ցանկ

1. Wierzbicka, A. (1997). "Understanding Cultures through their key words", Oxford Univ. Press
2. Карасик В. (2002). "Языковой круг: личность, концепты, дискурс", Волгоград "Перемена"
3. Кубрякова, Е. (2004). "Язык и знание: На пути получения знаний о языке: Части речи с когнитивной точки зрения. Роль языка в познании мира" Текст. / Е. Кубрякова. - М.: Языки славянской культуры
4. Маслова В. (2010). "Лингвокультурология", Москва
5. Cowie A., Mackin R., McCaig I (2008) "Oxford Dictionary of English Idioms", Oxford University Press
6. Բեդիրյան Պ. (2011) <<Հայերեն դարձվածքների ընդարձակ բացատրական բառարան>> Երևան, ԵՊՀ Հրատարակչություն
7. Սեֆերյան Ս., Հովհաննիսյան Լ. և այլք (1986) <<Անգլերեն-հայերեն դարձվածաբանական բառարան>> Երևան
8. Чунин А. (1984) "Англо-русский фразеологический словарь" Москва
9. Cambridge Idioms Dictionary, 2nd ed. (2006) available online at: (<http://idioms.thefreedictionary.com/>) last retrieved on 15/12/2012
10. McGraw-Hill Dictionary of American Idioms and Phrasal Verbs (2002) available online at: (<http://idioms.thefreedictionary.com/>) last retrieved on 17/12/2012

Contrastive Analysis of Phraseological Units Denoting Freedom in English and Armenian

This article dwells on the study of the concept "freedom" in English and Armenian. The contrastive analysis of phraseological units reveals not only common, but also some specific features, which are determined by national (English and Armenian) language creativity mechanisms. In English the concept under study is associated mainly with freedom from "social and individual constraints", whereas, in Armenian the concept in question is related to "moral, psychological freedom" in particular.